ցան, Քաւշեանք և Անդոնեանք պայծառացան, և Տրդատէս արքայն զելս ճանապարհին ի քեզ առնէր: Եւ մերն Լուսաւորիչ՝ յետ զանազան քրտանցն և նահատակութեանցն, առաքինութեանցն և ճգնութեանցն, ծածկաբար խոյս տուեալ Թաքչէր ի քեզ. պարապեալ, և ճանաչէր զՑէր, և վախճանէր ի Սեպուհ լերինն՝ և Արուսեակն ընդ քարիւ ծածկէր, վկաելով առանցքոյ[ա] անկատար զամենայն առաքինութիւնն, վասն որոյ զայլ բարիսն քև պսակէր:

Եւ զո՞ր ասեմ. քանզի անհամար են հըրեշտակցեալքն քև: Վասն որոյ տափացի զոփացի և առ քեզ դիմեցի, և սիրեմ զքեզ որպէս զվերինն Երուսաղէմ: Եւ մինչդեռ այսպէս [Թղ. 13բ] ջերմէր ի սէր անապատին, և ուրախացեալ ցընծայր զաներկեան ցընծութիւնն, ազդումն աստուածային ազդէր ի նմա, և բանն Նորա գայր ի վերա նորա որպէս յորդւոյն Զաքարիայ, և մխիթարաբար խորհէր շրջիլ զեղբարբք ի բովք. զի տեսանէր զնոսա յետ լուսոյն ի խաւար, և յետ բանին յանբանութիւն. հակիրճ և նախատինս ազգաց բազմաց, և զայլանայր հոգին որ ի նմա՝ և

---

ա. Ձեռ. անհասկանալի է, գուցէ անջատ պիտի գրուի «առանց քոյ»: